



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**

<< ----- >> << ----- >> 2021թ.

N -----

**<<Հեղաքննող լրագրողներ>> ՀԿ-ի <<Հեղք>>  
թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին**

**Հարգելի պարոն Բալասանյան**

Ի պատասխան Ձեր 2021 թվականի օգոստոսի 4-ի գրության տեղեկացվում է, որ <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի ապահովման նպատակով՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշման 17-ի կետի պահանջների, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից շրջաբերական է ուղարկվել համայնքներ /որտեղ առկա են հանրակրթությունից դուրս մնացած աշակերտներ/ և առաջարկվել է սեղմ ժամկետներում ՀՀ ոստիկանության և սոցիալական աջակցության տարածքային գործակալության հետ համատեղ ապահովել երեխաների հաճախումներն ուսումնական հաստատություններ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրված հանրակրթությունից դուրս մնացած երեխայի որևէ դիմում անհետևանք չի մնացել:

Կից տրամադրվում է տեղեկատվություն՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ:

Առդիր՝ 1 ֆայլ:

**Մարզպետի տեղակալ՝**

**Ա. Մեխակյան**

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 10.08.2021 17:32:17 GMT+4

Подписано: МЕКНАКЯН АРГИШТИ 3208860013

Կատ.՝ Ա. Բուդաղյան  
Գ. Հարությունյան  
Հեռ.՝ 0237/22035

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**<< Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաների վերա**

Հ/Հ	Դպրոցի անվանումը	Դպրոցից քանի երեխա է դուրս մնացել			Որ դասարանում են սովորել դպրոցից դուրս մնացած երեխաները	Ինչ պարճառով են դպրոցից դուրս մնացել	Դպրոցից դուրս մնացած քանի երեխա է հաշվառվել ոստիկանության անչափահասների բաժնում				Կան արդյոք հենաշարժողական խնդիրների ունեցող երեխաներ, ովքեր դուրս են մնացել դպրոցից	Դպրոցը հարմարեցված է հենաշարժողական խնդիրների ունեցող երեխաների համար
		2019թ.	2020թ.	2021թ.			2019թ.	2020թ.	2021թ.	Հաշվառման պարճառը		
1	<<Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	0	0	1	2-րդ	Ծնողի դիմումի համաձայն, երեխան կրկնելու է 1-ին դասարանը	0	0	0		Չկան	Այո
2	<<Արևիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	2	1		10-րդ, 11-րդ, 5-րդ	2-ն ամուսնության պատճառով, 1-ն առողջական խնդիրների /էպիլեպսիա/	2	0	0	Դպրոց չհաճախելը /ամուսնացել են/	Չկան	Ոչ
3	<<Զարթոնքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	3	5	12	8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ	Դպրոց չհաճախելու /8-ն ազգությամբ եզդի աղջիկներ են, 4-ը հայ են/	3	5	12	Դպրոց չհաճախելու	Չկան	Ոչ
4	<<Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	0	0	1	10-րդ	Ամուսնության պատճառով /ազգությամբ եզդի աղջիկ է/					Չկան	Ոչ

5	<<Տանձուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	3	0	1	12-րդ, 10-րդ	Ամուսնության պատճառով	0	0	0		Չկան	Այո
6	<<Փշատավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	0	0	3	9-րդ, 10-րդ, 11-րդ	Ամուսնության, բնակության վայրի փոփոխության, դպրոց չհաճախելու պատճառներով	0	0	3	Չհաճախելը	Չկան	Այո
7	<<Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	0	1	0	12-րդ	Ամուսնության պատճառով	0	0	0		Չկան	Մասնակի հարմարեցված է

**Քերթյալ**

**Եթե դպրոցը  
հարմարեցված չէ  
հենաշարժողական  
խնդիրների ունեցող  
երեխաների համար,  
ապա ինչ քայլեր է  
իրականացվում այդ  
ուղղությամբ**

Նախապատրաստակա  
ն աշխատանքներ են  
տարվում
